«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐ

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Սույն կանոնների մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները.

1.1.1. Ընկերություն՝ «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ,

1.1.2. Մասնակից՝ Ընկերության կողմից կազմակերպվող գովազդային խաղի մասնակցության պայմաններին համապատասխանող ՀՀ քաղաքացի ֆիզիկական անձ,

1.1.3. «Ներդրումային Բառեր» գլուխկոտրուկ՝ գլուխկոտրուկ, որում թաքնված են ներդրումների հետ կապ ունեցող բառեր,

1.1.4. «Ներդրումային Հարցեր» հարցաշար՝ ներդրումների թեմայով հարցերի շարք,

1.1.5. Կանոններ՝ Ընկերության կողմից կազմակերպվող գովազդային խաղի կանոններ:

2. ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ԽԱՂԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ

2.1. Ընկերությունը իր մարքետինգային ռազմավարության շրջանակներում կազմակերպում է գովազդային խաղ (այուհետ՝ Խաղ): Խաղը տեղի է ունենալու 04.10.2024 թ-ից 06.10.2024 թ-ը ներառյալ Դիջիթեք 2024 ցուցահանդեսին (այսուհետ նաև՝ Ցուցահանդես) Ընկերության տաղավարում:

2.2. Խաղի ընթացքում Մասնակիցների մեջ խաղարկվելու են նոթատետրեր կամ կտորի տոպրակներ (tote bag), (այսուհետ՝ Նվեր):

3. ԽԱՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ

3.1. Մասնակիցը տալիս է իր անհետկանչելի համաձայնությունը Կանոններին:

3.2. Կանոնները կրում են հրապարակային բնույթ և Խաղի ողջ ընթացքում հասանելի են Ընկերության կայքեջում՝ https://apricotcapital.am:

3.3. Ընկերությունը իրավունք ունի կատարել փոփոխություն Կանոններում, ընդ որում Կանոններում ցանկացած փոփոխություն ավտոմատ հասանելի է դառնում Մասնակցի համար Ընկերության կայք էջում՝https://apricotcapital.am:

3.4. Կանոնների փոփոխությունները համարվում են համաձայնեցված Մասնակցի հետ, եթե վերջինս չի դադարեցնում Խաղի իր մասնակցությունը:

3.5. Մասնակիցը տալիս է Ընկերությանը Խաղի շրջանակներում իր անձնական տվյալների հավաքագրման, օգտագործման և մշակման իր անհետկանչելի համաձայնությունը:

4. ԽԱՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Խաղի Մասնակից դառնալու համար մասնակիցը պարտավոր է միաժամանակ համապատասխանել ստորև նշված բոլոր չափորոշիչներին.

4.1.1. 04.10.2024 թ-ից 06.10.2024 թ-ի ընթացքում որևէ օր այցելել Դիջիթեք 2024 ցուցահանդեսին Ընկերության տաղավար և վերցնել «Ներդրումային Բառեր» գլուխկոտրուկի (այսուհետ՝ Գլուխկոտրուկ) մեկ օրինակ կամ լրացնել առցանց «Ներդրումային Հարցեր» հարցաշարը (այսուհետ՝ Հարցաշար)՝ կախված Ընկերությունը տվյալ պահին Խաղի որ տարբերակը կառաջարկի։

4.1.2. լինել ՀՀ քաղաքացի։

5. ԽԱՂԻ ԸՆԹԱՑՔԸ

5.1. Նվեր ստանալու համար մասնակիցը պետք է ճիշտ պատասխանի Հարցաշարի տասը հարցից առնվազ յոթին կամ 1) գտնի Գլուխկոտրուկի մեջ թաքնված տասը բառից առնվազ յոթը՝ դրանք վերցնելով շրջանակի մեջ, 2) հրապարակի լուծված Գլուխկոտրուկի նկարը իր ինստագրամյան էջի սթորիի տեսքով և նշի Ընկերության էջը՝ @apricotcapital (ինստագրամյան էջի առկայության կամ նշված գործողությունը տվյալ պահին տեխնիկապես հնարավոր լինելու դեպքում), 3) նույն օրվա ընթացքում՝ մինչև 18:00-ն մոտենա Ընկերության տաղավար՝ ստանալու մրցանակը՝ ներկայացնելով լուծված Գլուխյոտրուկը։Նույն Մասնակիցը Խաղի ողջ ընթացքում (04.10.2024 թ-ից 06.10.2024թ.) չի կարող դառնալ հաղթող մեկից ավել անգամ։

5.2. Ցուցահանդեսի 1-ին օրվա համար Նվերների առավելագույն քանակը (նոթատետրերը և կտորի տոպրակները միասին) կազմում է 80 հատ, 2-րդ և 3-րդ օրերեի համար՝ համապատասխանաբար 75 հատ։

5.3. Լրացված հարցաշարի կամ լուծված Գլուխկոտրուկի համար Մասնակիցը Նվեր չի ստանում Կանոնների 5.3 կետում նշված Նվերների սահմանաչափը տվյալ օրվա համար սպառված լինելու դեպքում։